ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3705-Ա «29» հուլիսի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԳԵՎՈՐԳ ՂԱՐԻԲՅԱՆԻՆ ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ ՄԵԼԲՈՒՌՆ ՔԱՂԱՔ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գևորգ Ղարիբյանի 22.07.2026 թվականի №Ն/47946-26 գրությունը, «Անվտանգության և վերականգնման մոտեցումների վերափոխում» թեմայով ISPCAN կոնգրեսին և Rise up ֆորումին մասնակցելու նպատակով.

1.Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գևորգ Ղարիբյանին՝ 2026 թվականի օգոստոսի 21-ից 29-ը ներառյալ գործուղել Ավստրալիայի Մելբուռն քաղաք:

2.Ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվելու են Երևան քաղաքի 2026 թվականի բյուջեի միջոցների հաշվին:

3.Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գևորգ Ղարիբյանի բացակայության ընթացքում երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության պետի պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչության պետի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար Վահե Գրիգորյանին:

4.Գործուղումից վերադառնալուց հետո, 3 աշխատանքային օրվա ընթացքում, փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը և դրանք հավաստող

փաստաթղթերը ներկայացնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ